# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

## ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Այսօր ՀՀ Ոստիկանության ծառայողի օրն է:

Ոստիկանության հարգելի՛ ծառայողներ, վետերաններ, աշխատակիցներ, շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի առթիվ:

Հարյուրավոր ոստիկաններ իրենց անձնվիրությամբ բազմիցս ապացուցել են իրենց հավատարմությունը Հայրենիքին և պետությանը, ինչպես նաև պատրաստակամությունը՝ ծառայելու երկրի անվտանգության ու բարօրության համար:

Եվ թեպետ առկա խոչընդոտներին ու մարտահրավերներին, Ոստիկանության ծառայողները պատվով են կատարում իրենց առջև դրված խնդիրները:

Շնորհավորում և շնորհակալություն եմ հայտնում յուրաքանչյուրիդ՝ ներդրած ջանքերի և սրտացավության համար: Առողջ ու տոկուն եղե՛ք, մնացե՛ք հավատարիմ ու անսասան ձեր առաքելությանը՝ հանուն Հայրենիքի խաղաղության ու հասարակության անվտանգության:

Ամենայն հարգանքով՝
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ